# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԻՐԱՎԱԿԱՆ

Բ. Նոյեմբերյան «20» «փետրվարի» 2019թ.

<<Նոյեմբերյանի պետական քոլեջ>> ՊՈԱԿ-ն, ի դեմս տնօրեն Արմեն Ղազարյանի, որը գործում է կազմակերպության հիման վրա (այսուհետև Պատվիրատու), մի կողմից, և Արմեն Շալիկոյի Ղազարյանը անձնագիր՝ AN 0234144, տրված՝ 07.08.2012թ. (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. *Պայմանագրի առարկան*

   1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է <<Նոյեմբերյանի պետական քոլեջ>> ՊՈԱԿ-ի դասասենյակների, աշխատասենյակների լուսամուտների փեղկերի կոսմետիկ հարդարման վերանորոգման ծառայությունները:

   1.1 Վերանորոգման, ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ Ծառայություն):

2. *Կողմերի իրավունքները և պարտականությունները*

   *2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝*

2.1.1.Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2, Եթե մատուցվել է, նորմատիվներին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 4.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագրից կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը:

2.2 ***Պատվիրատուն պարտավոր է՝***

2.2.1. Քննարկել և ընդունել մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2.Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 4.3 կետով նախատեսված տույժը:

2.3 **Կատարողը պարտավոր է՝**

2.3.3 Ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.3.4 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել պատվիրատուին:

***3. Պայմանագրի գինը***

3.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է **150000(մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ**: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող ծառայության բոլոր ծախսերը՝ այդ թվում վերանորոգման համար անհրաժեշտ նյութերը, ապրանքները, գործիքները, ինչպես նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

3.2 Պատվիրատուն իրեն մատուցված Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու կամ կանխիկ ձևով դրամարկղից ստանալու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է ծառայության ավարտից հետո 20 բանկային օրվա ընթացքում:

***4. Կողմերի պատասխանատվությունը***

4.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

4.2 Չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 3.1 կետում նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

4.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասին գնի նկատմամբ:

4.4 Սույն պայմանագրի 4.2 և 4.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում է Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարներից:

4.5 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.6 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

***4.7 Սույն պայմանագրի կատարման ժամկետ սահմանվում է 2019թ. փետրվարի 21-ից մինչև 2019թ. փետրվարի 28-ը:***

***5 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)***

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը

կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այսպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:

## *6 Այլ պայմաններ*

6.1Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

6.2 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

6.3 Սույն պայմանագիրը կազմված է 3 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկական օրինակ:

6.4 Սույն պայմանագրով չկարգավորված հարցերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.5. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

<<Նոյեմբերյանի պետական քոլեջ>>ՊՈԱԿ
Տավուշի մարզ, ք.Նոյեմբերյան, Շիրազի 17
ՀՀ ֆինանսների նախարարություն
գործառնական վարչություն
Հ/Հ 900398000357
ՀՎՀՀ 07400783

ՏՆՕՐԵՆ՝ ____________ Ա.Ղազարյան
/ստորագրություն/

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

Արմեն Շալիկոյի Ղազարյան
ՀՀ Տավուշի մարզ, գ.Բերդավան
4 փողոց , տուն 29
Բանկ -ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ-ԱԳՐԻԿՈԼ
<<Նոյեմբերյան>> մ/ճ
ՀՀ 220151824806000

Ա.Ղազարյան ____________
/ստորագրություն/